և զԱւլատեմիրդ՝ մեր որդոյդ Տէր Գրիգորիդ՝ սեփհական թէմ և վիճակ, աթոռ և հանգստեան տեղի. Կու աւրհնենք զձեզ զամենեսեան՝ ի մեծամեծաց մինչև ցփոքունս, զի աստուածապատիւ և զառաքելաշնորհ զերիմաստ եպիսկոպոսդ ձեր զՏէր Գրիգորդ՝ փառաւք և պատուով ընկալարուք, որպէս ի դրանէ սուրբ և երկնահանկէտ աթոռոյս աւրհնութեամբ առ ձեզ առաքած. և ամենայն խրատու դորայ որ ի շահ և յաւգուտ լիցի ոգոց ձեր, դուք մեծաւ հնազանդութեամբ ունկնդիր լերուք դմայ որպէս մեր անձինս։ Եւ զամենայն աւրինաւոր հաս և զիրաւունք ձեր՝ անթերի տուք ի ձեռս դորա՝ զվարթառատ սրտիւ. վասն զի որ ոք Տէր Գրիգորիդ հնազանդ է, նայ մեզ և Աստուծոյ աւրինացն և մեր Սուրբ Լուսաւորչի հնազանդ, և հնազանդեալքն աւրհնեալ եղիցին. իսկ հակառակողք և անհնազանդք դմայ և հրամանիս մեր, կրեսցեն պատիժ և պատուհաս յԱստուծոյ։ Եւ վասն առաւել հաստատութեան և վստահութեան սրտի ձեր՝ ձեռնագրեցաք մերով սովորական կարմիր ձեռագրովս։ Թե ի յունվ. ի Թվ. ՊԻԳ։

✠ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՇՆՈՐՀԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ։ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ։